



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅՏՆԱՐԿՈՒՄ
ԱՄՍՍԱՅԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

№ 3

№ 3

Վ. ՄԵԵԿՈՎՍԿԻ


ԱՐՋԵՍԱԷԳՈՐԾԱԿԱՆ
ԿՈՌԳԵՐԱՑԻԱՆ

ՆՈՐ ԿԵՆՑԱԳԻ
ԱՍԳԱՐԻ ԶՈՒՄ

Թարգմ. Ս. ԲՈՒՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԱՐԿՈՒՄԻ

ՅԵՆԵՎԱԳ—1930




1874
MAY 10
1874

Վ. ՄԵՇԿՈՎՍԿԻ

334

ԱՐԶԵՍԱՏԳՈՐԾԱԿԱՆ
ԿՈՊԹԵՐԱՑԻԱՆ
ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ
ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

16367
A 4265



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԱՐԿՈՊԻ

ՅԵՐԵՎԱՆ—1980

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս աշխատութիւնն առաջին փորձն է համախմբելու գոյութիւն ունեցող, սակայն անբավարար նյութերը, վորոնք բնութագրում են արհեստագործական կոոպերացիայի նվաճումները նոր կենցաղի ասպարիզում: Ուստի և անխուսափելի ու բնական են վրիպումները, այս կամ այն հարցի և կենցաղի դրական կամ յերանգավոր կողմերի վոչ լրիվ լուսաբանումն ու այլ բացեր:

10 հունիսի, 1929 թ.
Մոսկվա

«Մեզնում, իսկապես, յերբ իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքին է, յերբ պետական այդ իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզնում մնում է միայն լուծել բնակչությունը կոռպերացնելու խնդիրը... և ահա, վոչ բոլոր ընկերներն են իրենց հաշիվ տալիս, թե այժմ ի՛նչ հսկայական, չափազանց մեծ նշանակությունն է ստանում կոռպերացիան մեզ համար»:

(Վ. Լենին. — «Կոռպերացիայի մասին»)

Արհեստագործական կոռպերացիայի անհեղ զարգացումը բնորոշվում է կոռպերատիվների ու վերջիններիս մեջ կոռպերացված անգամների հետևյալ թվական ավյուներով — առ 1 հոկտեմբերի 1924 թվի կար 2.799 կոռպերատիվ՝ 123,3 հազար անալիտիկորեն առարհեստագործներով, իսկ առ 1-ն հոկտեմբերի 1928 թ.՝ 12.795 կոռպերատիվ՝ 912.750 անգամով, կամ ՍՍՀՄ-ի անալիտիկործների ընդհանուր թվի 22,5%-ը:

Արտագրական արտադրության տեսակարար կշիռը, ըստ կոռպերատիվների թվի, արդեն

կազմում է մինչև 75%, իսկ ըստ կոտպերացի-
ված անդամների թվի՝ 28—30%⁰:

Արհեստագործական կոտպերացիայի ըս-
պառման ու մատակարարման տարեկան շրջ-
ջանառությունը միլիարդների յե հասնում:

Վերոհիշյալ թվերը բավականին պերճա-
խոս են ապացուցելու ՈՍՀՄ-ի արհկոտպերա-
ցիայի նվաճումները, մանավանդ արտադրա-
կան կոտպերացման բնագավառում:

Արհեստագործական կոտպերացիայի զար-
գացման հնգամյա ծրագրով նախատեսված և
ներա հետագա զարգացումը իր գործունեյու-
թյան բոլոր բնագավառներում:

1932—33 թ. կոտպերացվածների թիվը
հասնելու յե 2·437·400 մարդու, ընդհանուր
արտադրանքի արժեքը՝ 4·126·8 միլ. ոււրյու,
հարկավոր հումքի արժեքը՝ 2·127·2 միլ.
ոււր., հիմնական շինարարությունը հնգա-
մյակի ընթացքում հասնելու յե 187·754·200
ոււր.:

Առաջիկա հնգամյակում արհեստագոր-
ծական կոտպերացիան ժողովրդական անտե-
սության մեջ մեծ նշանակություն և ունենա-
լու՝ նպաստելով մասսայական սպառման ա-
ռարկաների ավելանալուն ու գործազրկու-
թյունը կլանելուն:

ԱՊՐԱՆՔԱՌՈՒԻ ՅԵՎ ՉԱՐԱՇԱՀԻ ՃԱՆԿԵ-
ՐՈՒՄ

Թե ի՛նչպես, ի՛նչ պայմաններում և յին
աշխատում անայնագործները մինչև Հոկտեմ-

րեր—իրենց աշխատութիւններէ մեջ գեղեցիկ
կերպով, գրում եյին՝ Մ. Գորկին, Գլ. Ուս-
պենսկին, Վ. Կորայենկոն և մի շարք խոսքի
վարպետներ: Հոգեմաշ մի կյանք եր այդ: Տա-
ժանակիր աշխատանք, կուլակներէ ու միկի-
տանջիների կողմից մինչև մերկացնելու աա-
տիճան շահագործում, անվերջ հարբեցողու-
թյուն: Տնայնագործների սարկաղան վիճակը,
վորոնք ժամանակով գանվում եյին կուլակնե-
րի, սպրանքատունների ու շարաշահների (սպե-
կուլյանա) ճանկերում, պատկերավոր կերպով
նկարագրում և Փ. Սոլշմոգորսկին իր «Բոր-
վալդալ» վերնագրով, ուրվագծերի մեջ:

«Արհատագործութիւնը ցավի պէս ըն-
կով գյուղերը, բոնեց Բորովիչի գավառի կե-
սը, Վալդայի գավառի մի մասը, Նովգորոդի
գավառն ու անցավ Տվերի նահանգի Բեժեցկի
գավառը:

Ագրատութիւնից պրծնելու իրենց հույս
ու համատով՝ տնայնագործներն ընկնում եյին
գյուղական հարուստների ու զուրաների դը-
րած ծուղակի մեջ: Ծուղակի մեջ եյին ընկնում
մեքենաներով, գատումով, հույս ու հավատով
միտասին: Յորենն ել, մեկ ել տեսար գյուլուլին
վաթաթված՝ բոյ քչեց. կարծում ես թե եսա՝
լիք-լիք հասկեր կրոնի ու տուղ-տուղ հա-
տիկներ կտա. բայց արի ու տես, վոր հետ
հանկարծ նվազում—փուչ ու գատարկ և դուրս
գալիս, վորովհետև գյուլուլը նրան խեղդում,
ամբողջ հյուսթն ինքն և ծծում:

Հետո յերկրների, ծովերի հետևի մեքե-

նան հոգս ու շարձարանք եր պահանջում: Ար-
հեստագործությունը հումքի և պատրաստի
սպրանքի կարիք ուներ:

Իսկ հարուստ զուրաները—չե՛, վոր չե,
մենք ձեզ, դուք՝ մեզ—հետո հաշիվ կանենք:

— Ձեր գյուղացի խլոյի խաչոյին ճանա-
չո՞ւմ եք, վոր գյուղի ամենահարուստն ու
զուրեն եր:

— Չե՞:

— Եղպես ել բա՞ն ընի: Նրան ո՞վ չի ճա-
նաչում: Կին, աղջիկ, յերեխա, աղամարզ,
հալիվոր, պառավ, ամեն որ շարան-շարան
թափվում եյին նրա ճխանով դարբասի առաջ:
Վորը կոնատակին թոփերով կասվ եր տանում
հանձնելու, վորը թեկ կամ մանածացու յեր
ստանում, վորը՝ աղքատությունից խեղզը-
ված՝ մեկին հինգ վրադրով ցորեն, ֆահլի
կամ բամբակի վող վերցնելու, վորն ել՝ հին
մուրհակը նորացնելու:

Իսկ խաչո բեզը վոտը վոտին գցած՝ խը-
մում ու բեխերն եր սրում:

Նիկ. Պոսագսկու (Ն. Գորբաչով) «Շու-
կան» վերնադրով բանաստեղծությունը չկոս-
պերացված տնայնագործների ախուր սրերի
չատ պատկերներ և տալիս:

Կիրակի որն ել շուկան ե մի ցավ:

Արշալուսից վաղ՝ մթնով վերկացավ
Ու ֆամբա ընկավ հոտն առանց հովիվ—
Քաղաք քափվեցին տնգործներ անթիվ:

Ո՛ր, մենակ մարդու, դու կյանք չարատանջ.
Ցրտում, խավարում, մերկ ու սովատանջ,
Տնագործի խղճուկ պարկիին ես կպած,
Վրնց շունն իր ցցին՝ շղթայով կապած:

*

* *

Գժժում ե շուկան, վաղ լուսաբացին,
Ինչպես մեղվանոց՝ ճագ տված փեթակ,
Ու շատերն ողու լիք շիշը ծոցին՝
Կոնծել—նստել ես գետնին ծալպատակ:

*

* *

Ասես բանակներ՝ մարտի դուրս յեկած,
Սովար շարֆերով դեմ դեմի չոգած՝
Ամեն մի տնագործ շնորհիֆով, շարֆով,
Առաջն ե շարել ապրանքը կարգով:

*

* *

Գնորդ ես տնդդում՝ նմուշը դրած:
Նրանց արանֆով՝ բեխերը սրած,
Գոռոզ ֆայլերով, դանդաղ ու սուսիկ
Թուջարն ե գնում ժպտով խարուսիկ:

«Աղա մուշտարիֆ»—հաց սվոզը մեր,
Պարզն ասած՝ սարդեր...
Քիթ ու մուռքը նարպի մեջ լողում,
Անհագ աչֆերում կրակ ե շողում...

Ինչքան տալանք կա՛ր . . . լա՛վ տեղն է հիւմա,
Տնայնագործին պիտի հուպ տանք—գնա:
Ամենքի սիրուն էլ թուրի դողն է պատել—
Զուր չե՞նք աշխատել:

Վոտ՛ կտան, էլի: Հա՛ տնդդի, վոր տան,
Վոնց անցյալ գարնան . . .

Արտել մտնելը ջոկ բան է, վոր կա,
Այնտեղ գնի մեջ ցավացնող չկա:

*
* * *

Տանել—կուլ տալու էլ տեղ չի մնում,
Այստեղից ուղիղ արտել եմ գնում՝
Տեսնեմ՝ վա՞նց անեմ, վոր արտել մտնեմ,
Արեգործմիության յես անդամ գրվեմ:

Թարգմ. ԳԱՐԵԳԻՆ ՀԱԿՈՒՅԱՆ

Ամեն մի առաջավոր տնայնագործի նախաձեռնություն (սկսելը) գիտակից տնայնագործ մասսայի մեջ պատերազմից առաջ թե փոքր ի շատե համակրանք վայելում էլ էր, անմիջապես հարված էր ստանում կուլակարգյալնարեբողների կողմից, վորոնք այս նախաձեռնողների վրա ահագին լեզենդներ (պատմություն) էլին սարքում՝ նրանց քաղաքական «անբարեհուսության» մասին և այլն:

Վ. Գ. Կարալենկոն «Պավլովի ուրվագծեր» վերնագիրը կրող իր աշխատության մեջ այս մասին գրում է.—

«Մի փոքր ու համեստ գործ էր. այդ գործ»

ծին տառւմ էյին «Պալլոյում պահեստի արտել
(Ջերնով) և փոխառու խնայողական ընկերու-
թյան (Ֆալորսկի) ստեղծելու» դործ: Ջեր-
նովն ու Ֆալորսկին կարծում էյին, թե իրենք
ցույց կտան իսկական՝ ավելի ընդարձակ ճա-
նապարհք... Ճիշտ է, գյուղական նեղ ու դժ-
վարին ճանապարհով նրանք ուղւմ էյին
դուրս հանել... տնայնագործներին ու ցույց
տալ նրանց... յայն, բազմապիսի, հեռավոր՝
իր հետանկարներով գրավիչ աշխարհը...
Հարկավոր էր արտադրության նոր բջիջ կազ-
մակերպել և կենդանի կապով կապել սպառ-
ման գործի հետ:

Բայց Ջերնովի մտքերն այնպես էլ չկա-
տարփեցին:

Ու Վ. Գ. Կորալենկոն շարունակում է.

«Աշխարհիս յերեսին այլևս Ջերնով չկա
և, փեպի տեղ, դեղնած թղթերի անխնամ մի
կույտ է իմ առջև, փորոնց մեջ փայլում են
հաստատուն ձեռքով գրված ու հեռու-հեռու
ընկած թվանշաններ, տանձին նկատողու-
թյուններ, մտերմական նամակներ... Բայց
այս բոլորը փուլ են գալիս, ինչպես հանկարծ
կարփոց նվազարանի մի յար... Մեկը Ջերնո-
վի դեմ «ուձի վշշոցի» պես, իրրև քաղաքական
սուտ յուր, մի բան էր բաց թողել:

Սառը ժամանակ էր: Սուզարկություն են
կատարում... Ջերնովի խմբակը, վոր ժամա-
նակավորապես ջախջախված ու կազմալուծ-
ված էր, կամ բացակայում էր, կամ նշանա-
կությունը կորցնում, և այդ ժամանակ կապը

կտրում—Թափվում եր այն բոլորը, ինչ վոր կազմակերպողի ձեռքով առաջ պահվում եր խակ գործի մեջ...»

Պ. Վ. Զասողիմսկին (Վոլոզդին) ել ե գրեւ այն պայքարի վողբերգության մասին, վոր կոտպերատիվ շարժման պիտներներն եյին մղում կուլակների դեմ և վոր կապիտալիզմի պոյմաններում վերջացավ, իհարկե, վոչ աբանկանների ոգտին:

Իսկ կազմակերպված կոտպերատիվներն ընկնում եյին կուլակության ազդեցության տակ ու դառնում եյին կապիտալիստական ձեռնարկություներ:

«Արտեյն ընկնում ե Բիուկ Նափոյի ձեռքը: Պարզ ե—դառը գելին պահ են տալիս: Բիուկ Նափոն ել հո պտաի գել չեր, դառան մորթի հազած՝ ազվեսի Փանդ եր բանեցնում»:

Ուրեմն՝ դարձավ ամենամանակաք գործ:

Հապա դրամա՞րկիր... Ետա բան եյին սպասում այս դրամարկից, բայց ձեռները քիչ ընկավ: Վերջին ժամանակներս կուլակներն ել դադարեցին դրամարկի դեմ թշնամություն անելուց և նույնիսկ իրենք եյին գրվում այնտեղ: Նրանք իրենց համար ինչքան ասես՝ յերաչխափոր ճարում են և իրենց չրջանառությունների համար փող վերցնում, յերբ տանը պարապ փող չեն ունենում ու չեն ել ուզում մեծ տոկոսներ տալ... Իսկ ալքառուղբուտի համար, այսինքն՝ նրանց համար,

վորոնց գլխավորապես ել հենց վաղը հարկա-
վոր ե—գրամարկղը քարից պինդ ե...

Ի միջի ալյոց, մի բան ել կար, վոր կուշա
կարլամձատեբերը պարտապությունից մի բան
սարքելու համար «կոտպերատիվ շինարարու-
թյան գործի» ելին ձեռն գցում:

«Աննա Կարենինա» վեպի մեջ Լ. Տոլստոյը
սքանչելի կերպով ավել ե ազայական այսպիսի
մի բան սարքելու բնութագրությունը:

Բերենք այս հարցի շուրջը մի քանի խոսք
կարլամձատեբ յեղբայրներ—Ղազար աղա ե
Նիկողոս աղա («կոտպերատոր») Մելիք-Շահ-
նապարյանների խոսածից:

Ղազար աղա.—Բո ու Գեղամ աղի արխա-
տակրատական հայացքը յես իմանում եմ: Գի-
տեմ, վոր քանի խելքին խելք կա, զոռ ա տա-
լիս յեղած չարիքն արդարացնելու:

Դու վոչ մի բան չես ուզում անես: Ուղ-
ղակի՛ վոնց մինչե որս ես սպրեկ, ուզում ես
խակականն անես, ցույց տաս, վոր գլուղացի-
ներին շահագործում ես վոչ թե հեկց հեպես,
այլ գաղափարի համար:

Նիկողոս աղա.—Ե՛հ, գաթի դու հենց հա՛
եղպես ես մտածում, թարկը տուր...

Ղազար աղա.—Դու համողմունք վոչ ու-
նեցել ես, վոչ ել ունես, ենա, վոր քեզ սրտի
մխիթարանք ես անում:

Նիկողոս աղա.—Շա՛տ լավ եմ անում,
ա՛յ, ես ձեռիս միջիցն ա դալիս, ձե՛ռ քաշա
ինձնից:

Ղազար սղա.—ԲՆՐ՝, ձեռ քաշեցի, պըր՝
ծա՞նք. շուտուց պաի ձեռ քաշած քյնեյի.
կո՞րի—զլխիցս սաղ ելի: Գալս վանց եմ վոշ-
մանե՛հ՛լ...»

ԱՐԷԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՈՎ,
ԴԵՊԻ ՆՈՐ ԿԵՆՑԱՂ

Հիմա տեսնենք, թե ի՛նչ նշանակություն
ունի արհեստագործական կոոպերացիան տը-
նայնագործի ու նրան չըջապատող միջավայ-
րի կենցաղը փոխելու գործում: Նույնիսկ
պարզ տիպի այնպիսի կազմակերպություն-
ներ, ինչպես արհեստագործական—վարկային,
սպառողա — մատակարարման, պահեստա-
հումքայինն են, վորոնք սպառողա—մատակա-
րարման հիման վրա կոոպերացնում են մենա-
տնտես տնայնագործներին—նույնիսկ այս
կազմակերպություններն ել նպաստում են բա-
ժան—բաժան յեղած տնայնագործների սպ-
րանքները ներգրավելուն համայնացված կոո-
պերատիվ շրջանառության մեջ ու նախա-
պատրաստում են ընդհանուր արհեստանոցնե-
րի աշխատանքն արտադրական կոոպերացիա-
յին անցկացնելու գործը: Յեվ ահա անցողիկ
այս պրոցեսում արհեստագործական կոոպե-
րացիայի մի շարք կուլտուրական ձեռնար-
կումների ու միջոցառումների ազդեցության
տակ տնայնագործը ձեռք է բերում հասարա-
կական—կոոպերատիվ սովորություններ, բար-
ձրացնում է իր կուլտուրական մակարդակը:

Այս բանը մանավանդ աչքի յե ընկնում, յերբ տնայնագործների աշխատանքը միացվում է ընդհանուր արհեստանոց ունեցող մի արտելի մեջ, վոր գուտ ֆաբրիկի ու գործարանի ձևով է կազմակերպվում: Արտելային աշխատանքները ձևապես թյունների աշխատանքների ու արտագրական պրոցեսների բնույթը համարյա վաղընչով չի տարբերվում ֆաբրիկ-գործարանայինից:

Արինակ՝ թեյնիկ, սրճաման, ոճառաման պատրաստող «Металлопшамп» արտագրական արտելը (Մոսկվա), վոր իր մեջ է համախըմբում 159 հոգի: Այս արտելի արհեստանոցներն զբաղեցնում են չորս հարկանի մի տուն: Արտելի համարյա բոլոր արտագրական պրոցեսները մեքենայնացված են: Աշխատանքի դիսպլինան, բոտ անգամների աշխատանքի արտադրողականության, բարձր դիրքի վրա յե: Արտելն ունի կարմիր անկյուն, զբաղարան. արտելականները պատի թերթ են հրատարակում և այլն:

Այս դեպքերն ամենեվին ել յեզակի չեն, այլ հարյուրներով կարելի յե հաշվել: Դեռ մի կողմ թողած խոշորները, նույնիսկ միջակ ու մանր արտելները բացառիկ հետաքրքրություն են տալիս այն հսկայական դաստիարակչական սզդեցության տեսակետից, վոր ցույց են տալիս իրենց միացրած տնայնագործներին: Այս բանը մանավանդ զգալի չափով աչքի յե ընկնում գյուղում, ուր աշխատանքի ավելի կատարելագործված կազմակերպություն ունե-

ցող արտելի աշխատանքի միջոցով լայն մաս-
սաների մեջ կուլեկախվացման հիմունքներով
անտեսական շինարարության նոր սկզբունք-
ներ են մտնում :

Արտել մտնելով՝ մենասանտես տնայնա-
գործը փորձով համոզվում է, թե վո՛րքան
հեշտ է ընդհանուր, և այն ել մեքենայնացված
արհեստանոցի աշխատանքը, թե վո՛րքան է
այս աշխատանքն ազատագրում նրան մասնա-
վորի շահագործումից, բարձրացնում նրա
նյութական վիճակը, կուլտուրական մակար-
դակը: Ահավասիկ ձեզ մի որինակ: Կաշեհատի
«Заря свободы» («Ազատության արշալույս») արտելը (Լյուտովո կայարան, Հյուսիսային
յերկաթուղի, վոր ներկայումս 150 մարդ ու-
նի) մինչև 1927 թ. աշխատում էր առանց հա-
տակ ու առատապա՛ ծխոտ մարագում: Այժմ
արտելն արհեստանոցի համար մի ամբողջ
գործարան է վարձել՝ համապատասխան շար-
ժիչներով ու մեքենաներով: Գործարանն ունի
ընդհանուր լվացքատուն, սեղանատուն, հացի
փուռ, բաղնիք: Արտելականներն ապրում են
յերկու սքանչելի ամարանոցներում, ունեն
գրագարան, կարմիր անկյուն, մի քանի խրմ-
բակ և այլն: Այժմյան գրության և անցյալի
համեմատական գնահատականը գունեղ կեր-
պով տայիս է արտելի անդամներից մեկը—75
տարեկան մի հին տնայնագործ:

«Գու ձեռիդ կաշին վար ես գնում, իսկ նա
հլա վոր չի ուզում սեղից վեր կենա. բերնին
համ ա տվել, և՛, ախր մարդն սկսել ա իրան

Համար սպաս աշխատել» («Кустар и Артель»),
14 դեկտեմբերի, 1928 թ.:

Արհեստագործական կոոպերացիայի
կազմ-հրահանգչական բաժնի աշխատակիցնե-
րի համամիութենական 2-րդ խորհրդակցու-
թյանն արհեստագործական կոոպերացիայի
նկատմամբ վորտշել և, վոր անայնպեղծների
կոոպերացումն բնահանուր արհեստանոցի մեջ
(Ֆարբիկ, գործարան) սկզբնական կոոպերա-
տիվի հիմնական ձևն ու կոոպերացման վեր-
ջին նպատակն և, վորտվհետև այս ձևն ավելի
յի համարատաստանում արտադրական կոո-
պերացիայի արտադրական խնդիրներին և
միաժամանակ հնարավորություն և ապիս
կոոպերացիայի մեջ առնելու անայնպեղծ չը-
բավորության վորակյալ մասսաներին, այն
չբավորության, վոր սիտական արդյունաբե-
րության խոշոր գործարաններում աշխատանք
չի ձարում: Ակզբնական կոոպերատիվի այս
ձևիերի կիրառումը, ինչպես անցած տարիներ-
ի վորձն և զույց տալիս, մշակող արդյունա-
բերության բնագավառում, բնային տեսակի
արհեստագործության գեպում, ամենամեծ
արդյունքներն և տալիս: 15-րդ կուսհամագու-
մարի վորտշումների համաձայն, բոլոր տեսա-
կի միջոցները պետք և ձեռք առնվեն՝ ամրա-
պնդելու սկզբնական կոոպերացիայի այս հիմ-
նական ձևվր»:

Հարկավոր է ամեն կերպ աջակցել այս
գործին—ծրագրային մատակարարում, ֆի-
նանսավորում, նպատակային վարկավորում,

արտադրական հրահանգում, փոխադարձ ապահովագրութեան գարգացում, իրավական բնագավառում արտոնություններ և այլն:

Արհեստագործական արտելի ազդեցությունը շրջապատող միջավայրի վրա: Արտելի ազդեցութեան գեղեցիկ շրջապատող միջավայրի վրա յեզակի չեն: Արտելները վերջնում են դպրոցների, ՀամԼԿՅՅՄ-ի տեղական ըջիջներէ (որինակ՝ Տվերի նահանգի Անխիմովի կազմ-կոչակարների արտելի), սուսն-ձին դյուղերի (որինակ՝ Գոնի անայնաարհեստագործական միութեան սխառմի արտելներէ) շեֆությունը:

Սակալ չեն նաև այն դեպքերը, յերբ արտելները հաղորդիչներ են հանդիսանում ամբողջ շրջանի կենցաղի վերակառուցման գործում: Այսպես՝ Մալովսկի արտելը (Վոլոգդի նահանգ) իր վրա յե վերցրել գավառում մանկական հիմնարկների ֆոնդ կազմելու գործը:

Առանձին ուշադրութեան է արժանի արտելի ու գյուղատնտեսական արտադրութեան միջև կապ ստեղծող արտելների գործունեությունը: Այսպես, որինակ՝ Կալյաչինի «Արտանգրոց» կազմահասլ միութեան սխառմի մեջ կան արակտոր ունեցող արտելներ, վորոնց արակտորներով ամուր, արհեստագործութեան համար մեռած ժամանակ, գյուղացիները գաշտում աշխատում են:

Մերձվոլգյան գերմանական հանրապետութեան արտելներին զուգրնիթայ, վորոնք

26 արակտոր ունեն, արակլի աշխատանքների պարտապ սեղանում, իրենց մեխանիկական շարժիչները դնում են տեղական գյուղացիների, առաջին հերթին՝ տնայնագործների կալերն ու սրտերը :

Բարավիչ-Վարդաշի միությունն իր մեքենական ու բուրդ մանելու գործարաններն ունի: Ամբողջ սիստեմի շարժիչ կենտրոնն է 525 ձիու ուժ ունեցող ելեկտրական կայանը, վերջինս միայն արտեղները ձեռնարկություններին, այլև շրջապատի գյուղերին է եներգլիատայիս: Ամառը նույն այս ելեկտրական եներգլիան սպասարժվում է հողի բարելավման (մեկտրատիվ) աշխատանքների համար:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ

1636
A 4965

«Վարավիտև արհեստագործական կուսպերացիայի սիստեմում տնայնագործները կազմում են անդամների 40 տոկոսը, այլ և մի շարք արհեստագործություններ սպասարկվում են բացառապես կանանց կողմից,— առանձին ուշադրություն պետք է դարձնենք տնայնագործուհիներին կուսպերացիայի վարչական որգանների համար առաջ քաշելու, նրանց մեջ կուլտուր-լուսավորական ու քաղաքական աշխատանքների ծավալման, ինչպես և կենցաղային պայմանները լավացնելու գործին՝ այս նպատակի համար նշանակելով անհրաժեշտ միջոցներ»:

ՀԵՏՐՈՒՄ 446
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
44.275ՄԻԱ

(Համկկ(բ)կկ 1928 քվի սեպտեմբերի 3 վորոշումներից՝ «Տնայնագործներին կոոպերացնելու միջոցների ու տնայնագործական արդյունաբերական կոոպերացիայի մասսայական աշխատանքների մասին») :

Կին – տնայնագործուհիների կոոպերացումը (և այսպիսով՝ նրանց աշխատանքի ու կենցաղի պայմանների բարելավումը) արհեստագործական կոոպերացիայի ամենագլխավոր բնագավառներից մեկն է հանդիսանում :

ԽՍՀՄ-ի մեջ մանր-արդյունաբերության ձևով տարածված արտադրությունների թիվը չտիտղանց բաղմաղան է և թվով հաշվվում է 150—160 : Տնայնագործուհու աշխատանքը գործադրվում է արհեստագործությունների զգալի մասում, հանդիսանալով այնպես կամ գերազանցող, կամ՝ սեփական : Տնայնագործուհիների թիվը ԽՍՀՄ-ում հաշվվում է մոտավորապես 675․000 հոգի : Առատի և կարիք չկա խստելու քաղաքական և տնտեսական այն խոշոր նշանակության մասին, վոր արհեստագործական կոոպերացիան այս բնագավառում ունի :

Մանավանդ պետք է շեշտել աշխատանքի կարեւորությունն ազգային շրջաններում, ուր կնոջ գրությունն ընդհանրապես, իսկ տնայնագործուհուն առանձնապես, շատ ծանր է (Միջին Ասիա, Անդրկովկաս և այլն) : Այս շրջաններում կրոնն ու սովորությունը («ազաթ») կնոջն ստրկուհու գրության են հասց-

նում և նա գրկված և ձայնի իրափունքից ըն-
տանիքում ու հասարկութեան մեջ, ի նշան իր
սարկական միճակի, չազրա կամ մահճրմա
(գրկանքի քող) և կրում ու գանվում և յետ-
կի ճնշման տակ—մարդու, մոլլի, սովորու-
թյան:

Այս շրջաններում դեռ մինչև որս ել կեն-
դանի ու գործածական և հին ժամանակների
«փիլիսոփայութեանը», վոր ասում են թե՛
«կնոջ մանգղիլը անից մինչև աղբյուրն և»,
«կնիկը քու կաավի պես թոնրա շրթից չպիտի
հեռանա», «յես ասի՝ գալողն երկու մարդ ա-
դու մի ասի՝ մարդ ու կնիկ են» և այլն:

Տնայնագործուհու կոտպերացումը կա-
տարյալ հեղափոխութեան և անում նրա ըն-
տանեկան կառուցվածքի ու սովորութեան մեջ:
Չեզնիստում, որինակ՝ կնոջ կողմից արտել
մանելը միևնույնն և, թե մարդուց բաժանվեց
(ընկ. Չեանիյեվայի՝ 1928թ. տնայնագործնե-
րի համամիութենական համագումարում ար-
տատանած ձառից): Ուղբեկստանում տնայնա-
գործուհու արտել մանելը նրան զգալ և տալիս
վորպես մարդ ու՝ դեն զցել և տալիս մահճրա-
մեն» (Շահրիմոլլի ձառը նույն համագումար-
ում):

Կանանց ամեն մի արտել այստեղ հեռա-
կետ և հանդիսանում կուլտուրական նոր կյան-
քի համար: Արեվելցի կնոջ կողմից արտել
մանելու փաստն ինքն արդեն հեղափոխական
մի ազա և: Մահճրամեն ու չազրան դեն զցելով
իսկ՝ կինը կռիվ և հայտարարում հին տրա-

դիցիաներին, խավարամտության: Ազգային շրջանի տնայնագործուհու համար արտելը վոչ միայն ընտանեկան ստրկությունից ազատվելու միջոց և հանդիսանում, այլև պայքարի մի գեներ և հասարակական կյանքի մեջ նկատվող քարացածության դեմ:

Իգուր չե, վոր կազակասանի մանածագործ-կազակուհիների առաջին արտելը կոչվում և «կորչի դալիմը» լողունգ: կազակուհին սկսում և հասկանալ, վոր արտելն իսկապես իրեն համար աշխատանքի պայմանների լավացում, հասարակայնություն ու կուլտուրայի բերում:

Ուղրեկատանում ել կազմակերպված և 100 տնայնագործուհիներից բաղկացած մի արտել, վորոնք չադրաները դեն են գցել և կատարյալ ինքնուրույնության ու նյութական անկախության ճանապարհն են բռնել: Այս արտելը տեղական բնակչության համար չի կարող կուլտուրայի այն ոջալը չհանդիսանալ, վոր այնքա՛ն անհրաժեշտ և սոցիալիստական շինարարության ժամանակ:

Ազրբեջանում հիմա Ազկեհնոգործկումի վորոչմամբ արհեստագործական կոոպերացիայի սխաեմի մեջ են ընդգրկում 2000 տնայնագործուհի, վորոնք չադրաները դեն են գցել: Տնայնագործուհիները կոոպերացվում են սպիտակեղեն կարելու, գերձակության և այլ արհեստագործությունների գծով:

Զնայած կանանց կոոպերացիելու գործի դժվարություններին, ԽՍՀՄ առ 1 հոկտեմբե-

րի 1928 թ. արևեստագործական կոոպերա-
ցիայի սիստեմի մեջ և առևված յեղել մինչև
250 հազար կին, կամ ամբողջ կոոպերացված
տնայնագործների 29 ⁰/₁₀₀-ը, Ռ.Ս.Խ.Ֆ.Հ.-ում
այս տակոսը հասնում և 29,8⁰/₁₀₀, իսկ Թուրք-
մենիայում՝ նույնիսկ 83,6⁰/₁₀₀-ի: Կոոպերաց-
ված տնայնագործուհիների թիվն ընթացակ-
ցվում և իրենց աշխատանքի պայմանների ու
նյութական վիճակի լավացումով և ակալի-
ֆուիլյան, գրադիտության ու հասարակայ-
նության բարձրացումով: Հետեվանքը լինում
և այն, վոր վարչական ու վերահսկողության
մարմիններում տնայնագործուհու գերը մե-
ծանում և՛ առանձին շրջաններում հասնելով
մինչև 15—25⁰/₁₀₀-ի:

Պատգամավորական կորպուսը, վոր ար-
տեղների մեծ մասն ունեն, հասարակայնու-
թյան ու կուլտուր-լուսավորական աշխա-
տանքների հաղորդիչն և հանդիսանում կա-
նանց մեջ (Թյուրքմենստան). արտելի մեջ հե-
ղինակավոր մի մարմին և, վորի առաջ հաշվե-
տու յին լիսպորները (Ռասկազովի արտել).
նպատում և տնայնագործուհու առաջքաշմա-
նը՝ հասարակական ու խորհրդային աշխա-
տանքների համար, որինակ՝ գյուղխորհրդ-
ում (Յելեցի արտել): Պատգամավորական
կորպուսների աշխատանքներով կարելի յե
պնդել, վոր պատշաճ ղեկավարություն ունե-
նալու դեպքում այս կորպուսները կարող են
վորոշ շրջանի, գավառի հասարակայնության
ցուցադրական կենտրոն դառնալ—«գյուղացի

կանայք գիմում են մեզ, խնդրում են, փոք իրենց կազմակերպենք, իրենց հետ պարապենք և այլն»: (Տնտեսագործների 1928 թ. համամիութենական համագումարում արտասանած ընկ. Բիկովայի ճառից):

Ազդեցությունը կենցաղի վրա.—Արտելի ազդեցությունն իր գործունեության շրջանում ընթանում է իր շուրջն ստեղծված հասարակական հիմնարկների միջոցով (մսուրներ, մանկական հրապարակներ, մանկապարտեզներ, լվացքատներ, ճաշարաններ): Հաճախ այս հիմնարկների կազմակերպություններին մասնակից են արվում հասարակական լայն շրջաններ: Այսպես՝ Յելեցի միությունը փոխադարձ ոգնության դրամարկղի ու Առժողկոմատի մարմինների հետ միասին կազմակերպել են մսուր, մայրության ու մանկության պաշտպանության կոնսուլտացիա, բժշկական մշտական կոնսուլտացիաներ և այլն:

Սարատովի տնտեսագործուհիները դեռ յերկու տարի առաջ փորոշել են «առամերկնանոնց» տեղ մանկարարձուհիներ հրավիրել, «այսպիսով՝ փերջ տալով յերկրի այս մնացորդին»:

Այլևս խոտելու տեղ ել չի մնում, թե արհեստագործական կոոպերացիայի փերձիչայ նախաձեռնումները ծառայում են դեղձկուհու կենցաղն արմատական կերպով փերակառուցելու գործին: Ներկայումս այդ նախաձեռնումներն արդեն դպալի չափով տարածված են ըստ սիստեմի:

Հիմնական խնդիրներ: Տնայնագործուհու հասարակական - քաղաքական մակարդակը բարձրացնելու, անասական վիճակը թեթեւացնելու, մասնավորի ձեռքից ազատելու համար, սոսաջին հերթին տնայնագործուհիներին միավորելու թյան պարզ ձևերի մեջ կազմակերպելու ճանապարհը պետք է բռնել^{*}), այն ձևերի, վորոնք տեղական պայմաններին հարմար են (արհեստագործական-վարկային, մատակարարման և սպասման, փոխադարձ ոգնության գրամարկղներ): այնուհետև՝ կանանց գերազանց աշխատանք, անհրաժեշտ հումք և կիսաֆարրիկաա ունեցող արհեստագործությունները մատակարարելու, արտագրական վարկավորման ու կոոպերատիվ սպասման գործում կանանց արհեստագործությունների արտադրանքն ավելացնելու ճանապարհը: վերջապես՝ առավել չափով արտոնյալ պայմաններ պետք է ստեղծվեն՝ տնայնագործուհիներին, մանավանդ չքավորների կողմից և հաշիվ չքավորական ֆոնդերի փայաւճարներ մուծելու համար, նրանց տարկետումներ տալ և այլն:

Պակաս կարեւոր խնդիր չի այն արհեստագործությունների ֆինանսական դրությունն ամբրապնդելը, վորոնք կանանց գերազանց ուժ ունեն:

^{*} Ս. Ս. Հ. Միության Ժողովրդաբնի 1929 թվի մայիսի 3-ի վորոչումը՝ տնայնագործական արհեստագործություններով պարապող կանանց կոոպերացնելու միջոցների մասին:

Միաժամանակ՝ պետք է ուշադրութիւնն ուժեղացնել տնայնագործութիւնների արհեստագործական կոոպերացիան և ընդհանուր արհեստանոցների աշխատանքների մեջ, նրանց ներգրավելու և առաջին հերթին՝ ազգային շրջաններում, կանանց արտադրական տեխնիկան բարձրացնելու վրա (ամենապարզ դասագրքերի, մանիչների, գործիքների մաստակարարում, մրցանակարաշխութիւնների կազմակերպում) :

Մասնավոր կապիտալի ազդեցութիւնը կանանց արհեստագործութիւնների բնագավառում թուլացնելու համար պետք է ուժեղացնել, տնայնագործութիւնների կոոպերացիամբ կանանց տնայնագործական արդյունաբերութիւնն այն ճյուղերում, վորտեղ առանձնապես իրեն աչքի յե դրում մասնավոր կապիտալի շահագործումը :

Արհեստագործական կոոպերացիան, այս խնդիրներին զուգընթաց, նույնպես պետք է միջոցներ ձեռք առնի տնայնագործութիւնների մեջ զարգացնելու կույտուր-լուսավորական ու մասսայական աշխատանքը և լիկվիդացիայի յենթարկելու տեխնիկական անդրազիտութիւնը՝ հատուկ դպրոցներ, դասընթացներ, տեղումներ, ցուցադրական արհեստանոցներ, խորհրդակցութիւններ, կոնֆերենցիաներ, տնայնագործութիւնների հատուկ տեխնիկումներ ու ԲՈՒՀ-եր գործուղում և արտադրական խորհրդակցութիւններն ու այլ բա-

ների մեջ նրանց ներդրումը կազմակերպելու
միջոցով :

Բացառապես կարևոր նշանակութիւնն է
ստանում տնայնագործուհիները փոխադարձ
ապահովագրութեան աշխատանքը—մանա-
վանդ՝ Միջին Ասիայում, Անդրկովկասում և
ապգային ուրիշ շրջաններում : Ուշագրութիւ-
նը պետք է ուժեղացնել նաև կոնսուլտացիա-
ներ, «մայր և մանուկ» անկյուններ կազմա-
կերպելու, տնայնագործուհի կնոջը ժամանա-
կափոր անաշխատունակութեան և ծննդաբե-
րութեան դեպքում ապահովելու, մանկական
հաստուկ հիմնարկներ—մսուրներ, հրապարակ-
ներ և այլն կառուցելու վրա :

ԱՐԷԵՍԱԿՅԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՈՒ ՅԵՐԻ- ՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

«Բանվորների սերունդը, վոր դաս-
տիարակվել է կապիտալիստական
հասարակութեան մեջ, լավագույն
դեպքում կարող է վորոշել շահա-
գործման վրա կառուցված կապիտա-
լիստական կենցաղի հիմքերը խոր-
տակելու խնդիրը :

Այս սերունդը լավագույն դեպքում
կարող է վորոշել այնպիսի մի հասա-
րակական կառուցվածքի խնդիրներ,
վոր ոգնի պրոլետարիատին ու աշխա-
տավոր դասակարգերին՝ իշխանու-
թյունն իրենց ձեռքը պահելու և ա-

մութ հիմք ստեղծելու, վարի վրա կարող է կառուցել միայն սերունդը, վար աշխատանքի յե անցնում արդեն նոր պայմաններում, այնպիսի հանգամանքներում, յերբ մարդկանց մեջ չկա շահագործողական վերաբերմունք»...

(Ռ. ԼԿՅԵՄ III համագումարում արտասանած Լենինի նախը՝ «Յերիսասարդուքյան Միության խնդիրների մասին» 10 դեկ., 1920 թ.) :

Առաջին նվաճումները: Արհեստագործական կոոպերացիայի աշխատանքները յերիտասարդությունը կոոպերացնելու ասպարիզում յեթե հաշվի առնելու լինենք, բնականուր ամամբ սխտեմի առաջ ծառայած անասական դժվարությունները (թերամասակարարում, թերավարկավորում, ու մի շարք հանրապետությունների արհեստագործական միությունների յերիտասարդության), պետք է բավականին զգալի համարենք:

Մասավոր հաշվով՝ ԽՍՀ Միության արհեստագործական միության մոտ 200.000 հոգի յերիտասարդություն ունենք, վոր մասավորապես կազմում է բոլոր կոոպերացիան անայնպիսի և արհեստավոր անդամների 20 տոկոսը: Առանձին հանրապետություններում—Վրաստան, Թուրքմենստան և այլն,— յերիտասարդության կոոպերացման տոկոսը միջին տոկոսից (20 տոկ.) ցած է: այն հաս-

նում և բնդամենը (—) ստեղծի՝ ամբողջ կոտ-
պերացիված անաշնագործ մասսայի նկատ-
մամբ :

Ամենից լավ Համաուկրայնական արհես-
տագործական վարկային միությանն սխտեմի
գործերն են :

Այստեղ արտադրական արտելներում ներ-
գրավված յերխատարության թիւին զգալի
չափով բարձր և միջին ստեղծից (20⁰/0) և հա-
մասար և 23⁰/0-ի : (Յերկրորդ տեղը, ըստ յե-
րխատարության կոտպերացման թվի, բը-
նում են սրահեստա-հումքային ընկերության-
ները . յերրորդը՝ աշխատանքի արտելները և
Վերջինը՝ արհեստագործական վարկային ըն-
կերությանները) :

Համաուկրայնական արհեստագործական
վարկային միության սխտեմի մեջ կազմա-
կերպված են 8 արտադրական արտել, վորոնք
բաղկացած են բացառապես յերխատարու-
թյունից, ըստ վորում այդ արտելներից մեկն
Ուեսայում, 60 մարդից բաղկացած, կազմա-
կերպված է անապաստան ազդիկներից ու
փոքրահասակ հանցագործներից, մեկն էլ՝
հարկովում, 300 մարդուց բաղկացած, —
նախկին անապաստան դեռահասներից :

Յերկու արտելների աշխատանքի տվյալ-
ներն էլ այն յեղբակացությանն են բերում,
վոր Ուեսայի ու Սարկովի վորձը միանգա-
մայն հաջողիկ է : Համաուկրայնական ար-
հեստագործական վարկային միությանն այս

ուղղութեամբ վտար ե գրել կազմակերպչական աշխատանքները լայն ճանապարհի վրա և համաձայնութեան և յեկել Մանուկների Ունութեան ԿԿ կոմիտեյի ու Լուստուկամատի հետ, վարոնք ամեն կերպ աջակցում են իրեն այսպիսի արտելներ կազմակերպելու գործում:

Թվական նվաճումներին զուգընթաց նրկատվում և նաև յերիտասարգութեան աշխատանքի վորակի բարձրացում:

Մեծացել և հասարակական-կոտակրատիկ տկտիվութեանը, ավելացել և վարչական մարմիններում յերիտասարգութեան կողմից մասնակցելու տոկոսը:

Կուլտ-լուսավորական աշխատանքը համարյա բացատայես կատարում և յերիտասարգութեանը: Կուլտ. հանձնաժողովի կազմը 90-95⁰/₀ յերիտասարգներ են:

Արտելների աշակերտների թվի մեջ են տանված զգալի շափով անապատտան դեռահասներ և մանկատան յերեխաներ ու գործագուրկ դեռահասներ: ՀԱՄ ՈՒԿԽՍՀ արհեստագործական միութեանների աշխատանքներն այս ուղղութեամբ կատարվում են աշխատանքի բաժինների սերտ համերաշխութեամբ: Առ 1-ն ոգոտատի 28 թվի, ՀԱՄ ՈՒԿԽՍՀ արհեստագործական կոտակրացիայի մեջ տեղավորված են 4560 անապատտան: Հիմա այս աշխատանքն ե՛լ ավելի ուժեղացված է ու ծավալվում է հարանուն թափով:

Յերիտասարգութեան Օ (ՌՄԽՁՀ)

սխառեմամ կոտակերացված և մինչև 150.000 հոգի: Աշակերտութեան սխառեմը զարգանում և: Յերթասարգութեանը վտրակավորվում և ու նոր կուրսուրայի հաղորդիչ և հանդիսանում՝ այն փոխադրելով կենցաղի մեջ, շրջապատի բնակչութեան մեջ:

Չափազանց կարևոր է յերիտասարդութեան նախաձեռնութեանը մի շարք շրջաններում (Մոսկվա, Նիժնի և այլն) արտադրական սոցիալիստական մրցում կատարելու գործում: Այս աշխատանքը հետզհետե լայնանում ու խորանում է:

Հիմնական բերութեաններն ու հերքական խնդիրները. — Յերթասարգութեանն արհեստագործական կոտակերացիայի ղեկավար աշխատանքների մեջ բավարար չափով չբաշխելը, ՀԱՄԼԿՅԵՄ-ի՝ կոտակերացված յերթասարգ անդամների մեջ յեղած շնչին շերտավորմանը դուրնիթաց, այն յեղրակացութեանն և բերում, վոր արհեստագործական կոտակերացիայի որգանները ՀԱՄԼԿՅԵՄ-ի կումիտեների հետ բավարար չափով կապված չեն ու բավարար չափով ուշադրութեան չի դարձվում աշխատավոր յերիտասարդութեան այն խոշոր մասին, վոր արհեստագործական կոտակերացիայում է աշխատում:

Մինչդեռ, յերբ աս յերես կան մի միլիոն արդեն կոտակերացված անայնագործներ ու արհեստավորներ, անայնագործների մեջ կուրսուր-լուսավորական աշխատանքի ու փոխա-

